ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2013թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ I ԿԻՍԱՄՅԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2013թ.

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

2013թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ I ԿԻՍԱՄՅԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

**Բովանդակություն**


| | | | |
|---|---|---|---|
| | **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** | | 3 |
| | **2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ** | | 5 |
| **1.** | **ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ** | | 7 |
| **2.** | **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ** | | 9 |
| | 2.1. | Կրթություն | 9 |
| | 2.2. | Մշակույթ և սպորտ | 11 |
| | 2.3. | Առողջապահություն | 14 |
| | 2.4. | Սոցիալական պաշտպանություն | 16 |
| **3.** | **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ** | | 18 |
| | 3.1. | Գյուղատնտեսություն | 18 |
| | 3.2. | Բնապահպանություն | 20 |
| **4.** | **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ** | | 24 |
| **5.** | **ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ** | | 25 |
| | 5.1. | Ճանապարհաշինություն | 25 |
| | 5.2. | Ջրամատակարարում ու ջրահեռացում | 27 |
| | 5.3. | Գազամատակարարում | 30 |
| **6.** | **ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ** | | 32 |
| **7.** | **ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | 34 |
| **ՀԱՎԵԼՎԱԾ 1.** 2013 թ.ՏԱՊ-ով Լոռու մարզում նախատեսված միջոցառումների վերաբերյալ | | | 39 |
| **ՀԱՎԵԼՎԱԾ 2.** Տեղեկանք ՀՀ Լոռու մարզում 2013 թ.ՏԱՊ-ով իրականացված (առաջին կիսամյակ) ծրագրերի վերաբերյալ | | | 59 |
| **ՀԱՎԵԼՎԱԾ 3.** Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեով նախատեսված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի կատարման եռամսյակային (աճողական) համամասնություններն ըստ ծրագրերի, ծախսատեսակների և կատարողների (առանց օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված նպատակային վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծախսերի) | | | 65 |

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է Լոռու 2010-2013թթ. ՄԶԾ շրջանակում ստեղծված մարզպետարանի մոնիտորինգի և գնահատման խմբի կողմից Լոռու մարզային զարգացման ծրագրի 2013թ. Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառում-ների և I կիսամյակում իրականացված աշխատանքների վերլուծության հիման վրա:
Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, որը կազմվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգի, հաստատվել է ՀՀ Կառավարության 2009թ հոկտեմբերի 1-ի արտագնա նիստի թիվ 1130-Ն որոշմամբ:
ՄԶԾ-ի կազմման ընթացքում մարզպետարանում ձևավորվել են ոլորտային յոթ աշխատանքային խմբեր, որոնք համաձայն Լոռու մարզպետի 2009 թվականի փետրվարի 25-ի թիվ 49 Ա որոշման գործել են հետևյալ ուղղություններով.

- Արդյունաբերություն, մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն,
- Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի օգտագործում,
- Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր,
- Առողջապահություն և սոցիալական ապահովություն,
- Քաղաքաշինություն,
- Ենթակառուցվածքներ (ճանապարհաշինություն, տրանսպորտ, ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում),
- Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն:

ՄԶԾ-ի իրագործման ընթացքում ակնկալվում է ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

- Մարզի կայուն զարգացում,
- Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում,
- Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում,
- Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում,
- Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման նպաստավոր, հավասար հնարավորությունների ու բարենպաստ մրցակցային դաշտի ստեղծում,
- Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում,
- Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում,
- Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում,
- Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում,
- Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում,
- Մարզպետարանի կարողությունների ուժեղացում,
- Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում,
- Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և
- լիազորությունների հիմնավորված ընդարձակում,
- Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում,
- Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում,
- մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում,
- Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի հրամանով (հավելված 2) հաստատվել է ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի 2013թ. Տարեկան աշխատանքային պլանը, որի նպատակն է աջակցել ՄԶԾ-ի իրականացման աշխատանքներին: ՏԱՊ-ի թիրախներն են.

- Համախմբել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ի գերակա նպատակների իրականացման շուրջ:
- Կապել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ի արդյունքների հետ՝ «տրամաբանական հենքի» համակարգի օգնությամբ:
- Ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում:
- Սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումներն իրականացնելու համար:
- Սահմանել դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

Ընդհանուր առմամբ, ՏԱՊ-ում ներկայացված են այն միջոցառումները, որոնց իրականացման համար պատասխանատու է մարզպետարանը, ինչպես նաև արձանագրված են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու է ՄԶԾ մոնիտորինգի համակարգը:
Այս հաշվետվության մեջ վերլուծված են ՄԶԾ յոթ ոլորտներում («Արդյունաբերություն, մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն», «Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի օգտագործում», «Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր», «Առողջապահություն և սոցիալական ապահովություն», «Քաղաքաշինություն», «Ենթակառուցվածքներ (ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում)», «Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն») 2013թ. ՏԱՊ-ով նախատեսված և I կիսամյակի ընթացքում իրականացված միջոցառումների ամփոփ նկարագրությունը ըստ ոլորտների:
**Հավելված 1**-ում բերված է տեղեկատվություն 2013 թ.ՏԱՊ-ով Լոռու մարզում նախատեսված միջոցառումների վերաբերյալ
**Հավելված 2-**ում բերված է տեղեկատվություն 2013թ. I կիսամյակի ընթացքում Լոռու մարզի համայնքներում ծրագրերի իրականացման վերաբերյալ:
**Հավելված 3**-ում բերված է տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ծրագրերի (Լոռու մարզ), ծախսատեսակների և կատարողների վերաբերյալ:

## 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ըստ Լոռու մարզի 2010-2013թթ. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2013թ. կարիքների գնահատման՝ անհրաժեշտ գումարը եղել է **9,913,721.0 մլն** դրամ, սակայն, ինչպես երևում է ստորև բերված աղյուսակից, 2013թ. փաստացի պլանավորվել է կատարել **54,745,462.6 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում **2,167,597.0 մլն** դրամ պետ բյուջեից, որից **989.39** մլն-ը՝ հրատապ աշխատանքների կատարման պլանով:
2013թ. առաջին կիսամյակում իրականացվել է **19,808.519** մլն դրամի աշխատանքներ, որից **1,193.265** մլն-ը պետ. բյուջեից, այդ թվում **925.546** մլն դրամի աշխատանքներ 4-րդ հրատապ ծրագրի շրջանակներում:

**Աղյուսակ 1.**

### ՀՀ Լոռու մարզի 2013 թվականի զարգացման ծրագրի ֆինանսավորումն ըստ բնագավառների

**մլն դրամ**

| Հ/Հ | Ոլորտի անվանումը | 2013թ. պլանավորված ֆինանսավորումը, այդ թվում | | | Իրականացված է 2013թ. առաջին կիսամյակում, այդ թվում | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը | 2013թ. Պետական բյուջեից | | Ընդամենը | 2013թ. Պետական բյուջեի ֆինանսավորմամբ | |
| | | | Ընդամենը | Այդ թվում՝ հրատապ ծրագրով | | Ընդամենը | Այդ թվում՝ հրատապ ծրագրով |
| **1.** | **Արդյունաբերություն և մասնավոր հատված** | **49,453.500** | **0.000** | **0.000** | **18,133.07** | **0.00** | **0.00** |
| **2.** | **Սոցիալական ոլորտներ** | **833.6835** | **806.440** | **362.300** | **538.737** | **486.71** | **361.71** |
| 2.1. | Կրթություն | 360.310 | 341.590 | 113.600 | 140.934 | 128.68 | 128.68 |
| 2.2. | Մշակույթ և սպորտ | 232.744 | 224.220 | 164.070 | 142.411 | 140.64 | 140.64 |
| 2.3. | Առողջապահություն | 235.630 | 235.630 | 79.630 | 250.49 | 212.492 | 87.492 |
| 2.4. | Սոցիալական ապահովություն | 5.000 | 5.000 | 5.000 | 4.90 | 4.90 | 4.90 |
| **3.** | **Գյուղատնտեսություն և բնապահպանություն** | **513.172** | **22.000** | **22.000** | **37.93** | **19.99** | **19.99** |
| 3.1. | Գյուղատնտեսություն | 267.439 | 10.000 | 10.000 | 9.851 | 9.166 | 9.17 |
| 3.2. | Բնապահպանություն | 245.732 | 12.000 | 12.000 | 28.08 | 10.82 | 10.82 |
| **4.** | **Քաղաքաշինություն** | **518.5654** | **426.260** | **343.260** | **357.62** | **331.52** | **331.52** |
| 4.1. | Բնակարանաշինություն | 69.6000 | 50.000 | 0.000 | 9.055 | 0.00 | 0.00 |
| 4.2. | Բնակարանային տնտես. և բարեկարգում | 448.9654 | 376.260 | 343.260 | 348.56 | 331.52 | 331.52 |
| **5.** | **Ենթակառուցվածքներ** | **3,451.7421** | **912.897** | **261.830** | **741.16** | **355.04** | **212.33** |
| 5.1. | Ճանապարհաշինություն | 456.8205 | 284.097 | 142.830 | 195.055 | 170.346 | 125.746 |
| 5.2. | Ջրամատակարարում | 2,764.1871 | 581.800 | 72.000 | 446.77 | 139.862 | 41.74 |
| 5.3. | Գազամատակարարում | 230.7345 | 47.000 | 47.000 | 99.33 | 44.84 | 44.84 |
| | **Ընդամենը** | **54,770.6626** | **2,167.59700** | **989.390** | **19,808.519** | **1,193.27** | **925.55** |

Աղյուսակ 2.

## ՀՀ Լոռու մարզի 2013 թվականի զարգացման ծրագրի ֆինանսավորումն ըստ ֆինանսավորման աղբյուրների

մլն դրամ

| Հ/Հ | | 2013 թվականի զարգացման ծրագրի ֆինանսավորումն ըստ ֆինանսավորման աղբյուրների | 2013թ. ՏԱՊ-ով պլանավորված ֆինանսավորումը | Իրականացված է 2013թ. առաջին կիսամյակում |
|---|---|---|---|---|
| I | | **Ընդամենը մարզում՝** | **54,770.6626** | **19,808.519** |
| | | **ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ, այդ թվում** | **2,167.597** | **1,193.265** |
| | ❖ | ՀՀ մշակույթի նախարարություն | **60.15** | **0.00** |
| | ❖ | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | **227.99** | **0.00** |
| | ❖ | ՀՀ առողջապահության նախարարություն | **156.00** | **125.00** |
| | ❖ | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | **73.266** | **14.00** |
| | ❖ | ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ, *(Հրատապ ծրագիր)* | **989.390** | **925.55** |
| II | | **ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ** | **610.1656** | **86.3738** |
| III | | **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՈՆՈՐ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **2,136.90** | **295.71** |
| | ❖ | Գերմանական KFW բանկ | **1,529.4** | **285.80** |
| | ❖ | «Ասիական բանկ» վարկային ծրագիր | **607.5** | **9.95** |
| IV | | **ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ,** | **49,453.50** | **18,133.07** |
| | ❖ | «ՎԱԼԵՔՍ» ընկերություն («Էյ-Սի-Փի», «Թեղուտ» ՓԲԸ-ներ) | 47,400.0 | 17,067.07 |
| | ❖ | «Սագամար» ՓԲԸ | 1,200.0 | 246.00 |
| | ❖ | «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ | 353.5 | 200.0 |
| | ❖ | «Վանաձոր-Խիմպրոմ» ՓԲԸ | 500.0 | 620.0 |
| V | | **Այլ կազմակերպութուններ, հիմնադրամներ** | **402.5** | **100.1** |
| | ❖ | ՀՀ ԿԱ ԳՏՏՋ ԾԻԳ | **152.5** | **50.1** |
| | ❖ | ՀՍՆՀ | | **50.0** |
| | ❖ | «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագիր | **250.0** | **0.0** |

## 1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ 2013 թ. ՄԶԾ-ով առաջարկվում է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ-երի և գործարար համայնքի ներկայացուցիչներին:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով անցում կատարել մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը՝

- ✓ ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում,
- ✓ Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգային դրույթների իրականացում,
- ✓ ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի կազմակերպում:

Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի Լոռու մասնաճյուղը հաջողությամբ շարունակում է իր աշխատանքը մարզում:
ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի արդյունքում 2013թ. I կիսամյակի ընթացքում Լոռու մարզի ՓՄՁ-ներին տրամադրվել է հետևյալ աջակցությունները՝

| | |
|---|---|
| ✓ Տեղեկատվական և գործարար ուղեցույցների տրամադրում | - 500 ՓՄՁ սուբյեկտ |
| ✓ Գործարարների հետ խմբային հանդիպումներ | - 5 ՓՄՁ սուբյեկտ |
| ✓ Ուսուցողական աջակցության ծրագիր | - 58 ՓՄՁ սուբյեկտ և անհատ |
| ✓ «Լավագույն կին-գործարար» մրցանակաբաշխություն | - 18 կին գործարարներից 2 –ին տրամադրում |
| ✓ Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց ծրագրի շրջանակում | |
| • համագործակցության հայտի ընդունում | 15 ՓՄՁ |
| • ամսական էլ. տեղեկաթերթերի և այլ տեղեկատվական բնույթի նյութերի տարածում | 180 ՓՄՁ |
| • ՁԵՑ-ի համապատասխան գործիքների միջոցով հայաստանյան ՓՄՁ սուբյեկտների պահանջին համապատասխան գործընկերների որոնում և գործարար կապերի ստեղծմանն աջակցություն | 6 ՓՄՁ |
| ✓ Տեղական տնտեսական զարգացման քարտեզագրում | մարզի 13քաղաքներում, 22 գյուղերում |
| ✓ Համայնքների տնտեսական ներուժի բացահայտում | Ստեփանավան և Տաշիր քաղաքներ |
| ✓ Իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն | 1111 ՓՄՁ սուբյեկտ |
| ✓ Սկսնակ գործարարների աջակցության ծրագիր | 19 ՓՄՁ սուբյեկտ և անհատ |
| ✓ Տրամադրված վարկային երաշխավորություններ | 1 գործող ՓՄՁ սուբյեկտի |
| ✓ www.marketplace.smednc.am կայքում տվյալների տեղադրում | 240 ՓՄՁ |

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**

Մարզի տնտեսության առաջատար բնագավառի՝ արդյունաբերության մասով 2010-2013թթ. Լոռու մարզի ՄԶԾ-ով կարիքի գնահատում չի կատարվել, քանի որ այս բնագավառում ներդրումների բացարձակ մեծամասնությունն ընկնում է մասնավոր հատվածի վրա, իսկ 2009 թվականին՝ ՄԶԾ-ի կազմման ժամանակ համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի պատճառով հնարավոր չէր գոնե մոտավոր կանխատեսել ճյուղի զարգացման հիմնական ուղղությունները, ներդրումների չափերը:
Չնայած դրան, 2013 թվականի համար մարզի արդյոնւաբերության գերակա ճյուղերում մասնավոր ընկերությունների, ներդրողների և ֆինանսական կառույցների կողմից իրատեսական է համարվել պլանավորվել **49,830.80** մլն դրամի ներդրումներ:

2013 թվականի 1-ին կիսամյակում մարզի արդյունաբերության գերակա ճյուղերում մասնավոր ընկերությունների, ներդրողների և ֆինանսական կառույցների կողմից իրականացվել է ընդամենը **18,133.07** մլն դրամի ներդրումներ, մասնավորապես.

- հանքարդյունաբերություն
  - «Վալլեքս» ընկերությունների խումբ («Թեղուտ», «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ներ) 17,067.07 մլն դրամ (41.627 մլն ԱՄՆ դոլար)
  - «Սագամար» ՓԲԸ 246.00 մլն դրամ ( 0.60 մլն ԱՄՆ դոլար)
  - «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ 200.00 մլն դրամ
- քիմիական արդյունաբերություն
  - «Վանաձոր-Քիմպրոմ» ՓԲԸ 620.00 մլն դրամ

## 2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

### 2.1. Կրթություն

Համաձայն Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ տնտեսական զարգացման ծրագրի 2013թ. տարեկան աշխատանքային պլանի մարզի կրթության ոլորտում շարունակվել է Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման պետական քաղաքականության իրականացումը՝ կրթության որակի և մատչելիության բարձրացումը դիտվել է որպես ոլորտի զարգացման գերակա նպատակ: Ուշադրություն է դարձվել միջնակարգ կրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին, ուղղված դպրոցների ապակենտրոնացմանը և ժողովրդավարացմանը, կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ու թափանցիկության ապահովմանը:

2013թ. ՏԱՊ-ի առաջին կիսամյակում շարունակվել են դպրոցների վերանորոգման, տեխնիկական վերազինման և գույքի թարմացման միջոցառումները, ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացմանը, դպրոցների՝ որպես ինքնակառավարման մարմինների ուժեղացմանն ուղղված աշխատանքները:

Ընթացիկ տարվա 1-ին կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Կրթադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեությունը բարելավելու նպատակով ուսումնասիրություններ են կատարվել մարզի թվով 15 դպրոցներում, (Վանաձորի թթ.1 և 25, Վահագնիի, Սպիտակի թ.6, Գեղասարի, Ստեփանավանի թթ.2 և 6, Ուրասարի, Սվերդլովի, Լեռնապատի, Ալավերդու թթ.4 և 7, Օձունի թ.2, Կարմիր Աղեգու և Ծաթերի) ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:
- Նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներ են տարվել միասնական քննություններին մասնակցող 1112 շրջանավարտների համար, իրականացվել է մարզի դպրոցների ավարտական քննությունները և գիտելիքների ստուգումը պատշաճ

մակարդակով կազմակերպելու, անցկացնելու և ընթացքը վերահսկելու ծրագիրը՝ հաստատված Լոռու մարզպետի կողմից:

- Պատշաճ մակարդակով կազմակերպվել և անցկացվել են դպրոցականների առարկայական օլիմպիադաների դպրոցական, տարածքային և մարզային փուլերը՝ 44 աշակերտ դարձել է հանրապետական փուլի տարբեր կարգի մրցանակակիրներ:
- Ամփոփվել են «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ» և «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների արդյունքները: Ամփոփվել են նաև Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցու քրիստոնեական դաստիարակության կենտրոնի կողմից կազմակերպված «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ» և «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների արդյունքները: Հաղթողները, ինչպես նաև օլիմպիադաներում հաջողության հասած աշակերտները կխրախուսվեն և հանդիսավոր պայմաններում կպարգևատրվեն մարզպետի և համայնքների ղեկավարների կողմից:

*Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2013թ. կրթության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **1,192.18 մլն** դրամ, սակայն փաստացի պլանավորվել է կատարել **360.31 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում **341.59** մլն դրամը պետ. բյուջեով, որից 113.6 մլն-ը՝ հրատապ աշխատանքների կատարման պլանով:*

Մարզի կրթության ոլորտում 2013թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսված **360.31** մլն դրամի դիմաց առաջին կիսամյակում իրականացվել է **140.934** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում պետ. բյուջեից նախատեսված **341.59** մլն դրամի դիմաց՝ **128.68**1 մլն դրամի աշխատանքներ, որից **128.68** մլն դրամի՝ հրատապ (IV փուլ) ծրագրով:
Աղյուսակ 2.1.1. բերված են կրթության ոլորտում 2013թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների:

**Կրթության ոլորտում 2013թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների**

Աղյուսակ 2.1.1

| Հ/Հ | Օբյեկտի և ծրագրի անվանումը | 2013թ. Ծրագիր (մլն դրամ) | Կատարվել է առ | | Ծանոթութ-յուն |
|---|---|---|---|---|---|
| | | | **01.07.13թ.** (մլն դրամ) | այդ թվում հրատապ 4-րդ ծրագրով | |
| | **Ընդամենը մարզում՝** | **360.3099** | **140.934** | **128.681** | |
| **I** | **ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ** | **341.590** | **128.681** | **128.681** | |
| | **ՀՀ Քաղաքաշինության նախարարություն** | **360.3099** | **140.934** | **128.681** | |
| 1 | Ալավերդու արհեստագործ. ուսումնարանի հիմնանորոգում | 72.990 | | | ՀՀ ՔՆ |
| 2 | Մարզի դպրոցի կառուցում | 155.000 | | | ՀՀ ՔՆ |
| | **ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)** | **113.600** | **128.681** | **128.681** | |
| 1 | Լեռնավան համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում | 7.000 | 6.16 | 6.16 | Հրատապ |
| 2 | Ալավերդի համայնքի թիվ 8 դպրոցի մարզադահլիճի նորոգում | 15.730 | 19.73 | 19.73 | Հրատապ |
| 3 | Արջուտ համայնքի դպրոցի պատուհանների փոխում | 2.870 | 2.57 | 2.57 | Հրատապ |
| 4 | Սարչապետ համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում | 6.000 | 5.81 | 5.81 | Հրատապ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5 | Կաթնաջուր համայնքի մանկապարտեզի կառուցում | 33.000 | 20.00 | 20.00 | Հրատապ |
| 6 | Սարչապետ համայնքի մանկապարտեզի գույքի ձեռքբերում (սուբվենցիա) | 0.000 | 0.00 | 0.00 | Հրատապ |
| 7 | Ծաղկաբեր համայնքի դպրոցի գազաֆիկացում | 5.000 | 4.71 | 4.71 | Հրատապ |
| 8 | Լուսաղբյուր համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում | 14.000 | 10.93 | 10.93 | Հրատապ |
| 9 | Ահնիձոր համայնքի դպրոցի վերանորոգում | 10.000 | 10.00 | 10.00 | Հրատապ |
| 10 | Միխայլովկա համայնքի դպրոցի վերանորոգում | 20.000 | 21.27 | 21.27 | Հրատապ |
| 11 | Ագարակ համայնքի մանկապարտեզի ցանկապատի կառուցում | 4.400 | 4.40 | 4.40 | Հրատապ |
| 12 | Լուսաղբյուր համայնքի դպրոցի տանիքի վերանորոգում | 11.070 | 11.07 | 11.07 | Հրատապ |
| 13 | Վանաձոր համայնքի թիվ 6 դպրոցի վերանորոգում | | 11.47 | 11.47 | Հրատապ |
| 14 | Գարգառ համայնքի մանկապարտեզի կառուցում/Լրաց/ | 0.560 | 0.56 | 0.56 | Հրատապ |
| | **ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ** | **18.7199** | **0.253** | **0.000** | |
| 1 | Եղեգնուտ համայնքի մանկապարտեզի շենքի ձեռքբերում | 0.8099 | | | |
| 2 | Գարգառ համայնքի մանկապարտեզի շենքի ձեռքբերում | 1.1100 | | | |
| 3 | Մեծ Այրում համայնքի մանկապարտեզի շենքի ձեռքբերում | 0.3000 | | | |
| 4 | Մեծավան համայնքի մանկապարտեզի շենքի ձեռքբերում | 10.5000 | 0.253 | | |
| 5 | Ծաղկաբեր համայնքի մանկապարտեզի շենքի ձեռքբերում | 1.0000 | | | |
| 6 | Կաթնաջուր համայնքի մանկապարտեզի շենքի ձեռքբերում | 5.0000 | | | |
| | **ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ** | **0.000** | **12.000** | **0.000** | |
| 1 | Հաղպատի դպրոցի ուժեղացում, վերակառուցում | | 12.00 | | ՀՍՆՀ |

**2.2. Մշակույթ և սպորտ**

2013թ. ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում են նաև մշակութային օջախների վերանորոգման և մշակութային միջոցառումների իրականացման աշխատանքները:

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2013թ. մշակույթի և սպորտի ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **265.00** մլն դրամ: Մարզի մշակույթի և սպորտի ոլորտում 2013թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսված ***232.74*** մլն դրամի դիմաց առաջին կիսամյակում իրականացվել է **142.411** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում պետ. բյուջեով նախատեսված ***224.22*** (164.07 հրատապ ծրագրով) մլն դրամի դիմաց իրականացվել է **140.64** մլն դրամի աշխատանքներ, որն ամբողջությամբ իրականացվել է IV հրատապ ծրագրով: **1.77** մլն դրամի աշխատանքներ կատարվել են համայնքային բյուջեներով:

Աղյուսակ 2.1.2 –ում բերված են մշակույթի և սպորտի ոլորտներում 2013 թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների:

**Մշակույթի և սպորտի ոլորտներում 2013 թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների**

Աղյուսակ 2.1.2

| Հ/Հ | Օբյեկտի և ծրագրի անվանումը | 2013թ. Ծրագիր (մլն դրամ) | Կատարվել է առ | | Ծանոթութ-յուն |
|---|---|---|---|---|---|
| | | | **01.07.13թ.** (մլն դրամ) | այդ թվում հրատապ 4-րդ ծրագրով | |
| | **Ընդամենը մարզում՝** | **232.7436** | **142.411** | **140.640** | |
| **I** | **ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ** | **224.220** | **140.64** | **140.640** | |
| | **ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** | **60.150** | **0.000** | **0.000** | |
| 1 | Քոբայրավանքի հիմնանորոգում | 17.950 | | | |
| 2 | Սանահինի վանքի հիմնանորոգում | 22.500 | | | |
| 3 | «Լոռի Բերդ» ամրոցի հիմնանորոգում | 19.700 | | | |
| | **ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)** | **164.070** | **140.640** | **140.640** | |
| 1 | Կարմիր Աղեգ համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգում | 2.070 | 1.79 | **1.79** | |
| 2 | Հագվու  համայնքի համայնքային կենտրոնի կառուցում | 35.000 | 29.99 | **29.99** | |
| 3 | Աhնիձոր համայնքի հանդիսությունների սրահի կառուցում | 12.000 | | | |
| 4 | Գոգարան համայնքի միջոցառումների սրահի կառուցում | 30.000 | 28.33 | **28.33** | |
| 5 | Դաշտադեմ համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգում | 15.000 | | | |
| 6 | Ձյունաշող համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգում | 15.000 | 14.19 | **14.19** | |
| 7 | Հաղպատ համայնքի մշակույթի տան վերանորոգում | 40.000 | 33.00 | **33.00** | |
| 8 | Աջակցություն մշակութային համույթներին (սուբվենցիա) | 15.000 | 15.00 | **15.00** | |
| 9 | Հակահրդեհային վահանակների տեղադրում (Գեղասար, Սարամեջ, Ղուրսալի, Սարահարթ, Լեռնահովիտ, Բազում համայնքային կենտրոններ, Հաղպատի մշակույթի տուն) | 0.000 | 3.49 | **3.49** | |
| 10 | Սարամեջ համայնքի համայնքային կենտրոնի ջեռուցման համակարգի կառուցում | 0.000 | 2.55 | **2.55** | |
| 11 | Ղուրսալի համայնքի համայնքային կենտրոնի ջեռուցման համակարգի կառուցում | 0.000 | 2.41 | **2.41** | |
| 12 | Պրիվոլնոյե համայնքի մշակույթի տան վերանորոգում | | 6.53 | **6.53** | |
| 13 | Լեջան համայնքի միջոցառումների սրահի վերանորոգում | | 3.36 | **3.36** | |
| **II** | **ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ** | **8.5236** | **1.7707** | **0.0000** | |
| 1 | Գուգարքի մարզադպրոցի շենքի մասնակի նորոգում | 1.0000 | | | |
| 2 | Գյուլագարակի համայնքային կենտրոնի կահավորում | 0.4300 | | | |
| 3 | Լոռի Բերդ համայնքի մշակույթի տան մասնակի նորոգում | 0.5936 | | | |
| 4 | Կուրթանի հուշարձանների և մշակութային կոթողների նորոգում, տարածքի բարեկարգում | 0.5000 | | | |
| 5 | Հագվու հուշարձանների և մշակութային կոթողների նորոգում, տարածքի բարեկարգում | 0.2000 | | | |
| 6 | Չկալովի ակումբի մասնակի նորոգում | 0.1000 | | | |
| 7 | Լեռնահովիտ համայնքի մշակույթի տան | 1.0000 | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կահավորում, գույքի ձեռքբերում | | | | |
| 8 | Ձորամուտի ակումբի մասնակի նորոգում | 0.2000 | 0.2932 | | |
| 9 | Միխայելովկայի ակումբի կահավորում, հուշարձանների ու մշակութային կոթողների տարածքի բարեկարգում | 0.3000 | | | |
| 10 | Նորաշենի մշակույթի տան նորոգում, հուշարձանների ու մշակութային կոթողների տարածքի բարեկարգում | 2.000 | 1.0000 | | |
| 11 | Ծաղկաբեր համայնքի հուշարձանների ու մշակութային կոթողների տարածքի բարեկարգում | 1.200 | | | |
| 12 | Կաթնաջուր համայնքի մշակույթի տան կահավորում | 1.000 | 0.4775 | | |

Լոռու մարզի մշակույթի ոլորտում 2013թ. առաջին կիսամյակում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- ✓ Բարձր մակարդակով կազմակերպվել և անց են կացվել Ամանորին և Սուրբ Ծննդին, Հայոց բանակի կազմավորման 21-րդ տարելիցին, Կանանց միջազգային տոնին, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան, ՀՀ Անկախության 22-ամյա հոբելյանին նվիրված մի շարք միջոցառումներ, որոնց մասնակցել են մանկավարժներ, արվեստագետներ, Հայրենական Մեծ պատերազմի և Արցախյան գոյամարտին մասնակցած վետերաններ, մտավորականներ:
- ✓ Կազմակերպվել են միջոցառումներ, նվիրված ՀՀ Սահմանադրության 16-ամյակին: Կազմակերպվել և անց է կացվել մի շարք փառատոներ, համերգներ, ներկայացումներ եւ ցուցահանդեսներ, որտեղ իրենց ակտիվ մասնակցություն են ցուցաբերել մարզի տարբեր շրջաններից հրավիրված երաժշտական և արվեստի դպրոցների շնորհալի պատանի կատարողները:
- ✓ 2013թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով մշակույթի նախարարության կողմից իրականացվող մարզի մշակութային-պատմական և հոգևոր կոթողների՝ Քոբայրավանքի, Սանահինի վանքային համալիրի և «Լոռի Բերդ» ամրոցի հիմնանորոգման աշխատանքները մեկնարկային ընթացքում են, իսկ Օձուն համայնքի վանքի վերականգնողական աշխատանքները շարունակվում են:

Լոռու մարզի սպորտի ոլորտում 2013թ. առաջին կիսամյակում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Թեժ լեռան հովտում կազմակերպվել և անց է կացվել «Լոռվա ձմեռ-2013» 43-րդ ավանդական մարզատոնահանդեսը: Համաձայն միջոցառման ծրագրի, Թեժ լեռան հովտում կազմակերպվել և անց է կացվել տարբեր մարզաձևերից և ազգային խաղերից մրցաշարեր, որոնց հաղթողները պարգևատրվել են պատվոգրերով և նվերներով:
- Վանաձորում անցկացվել է ավանդական դարձաց «ՀՀ Լոռու մարզպետի գավաթ» մրցաշարը՝ ֆուտզալ, սեղանի թենիս, վոլեյբոլ մարզաձևերից, որին մասնակցել են տարածաշրջաններում վերոնշյալ մարզաձևերից հաղթած թիմերը, ինչպես նաև Վանաձորից 2-ական թիմ ամեն մարզաձևից: Բոլոր մարզաձևերում հաղթողներն ու մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերը պարգևատրվել են մարզպետի պատվոգրով, մարզպետի գավաթով, մեդալներով, դրամական պարգևներով:
- Լոռու մարզի քաղաքային համայնքներում կազմակերպվել է ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի առաջին (համայնքային) և երկրորդ՝ մարզային փուլերը:

## 2.3. Առողջապահություն

*Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2013թ. առողջապահության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է* ***310.0 մլն*** *դրամ, փաստացի պլանավորվել է կատարել* ***235.63 մլն*** *դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում* ***235.63*** *մլն դրամը պետ. բյուջեով, որից 79.63 մլն դրամը՝ հրատապ աշխատանքներով:*

*2013 թվականի 1-ին կիսամյակում ոլորտում ֆինանսական բոլոր աղբյուրների հաշվին իրականացվել է* ***250.492*** *մլն դրամի կապիտալ ներդրում, որից* ***212.492*** *մլն դրամը՝ պետ.բյուջեի միջոցներով՝ հրատապ IV ծրագրով:*

**Առողջապահության ոլորտում 2013թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների**

Աղյուսակ 2.2.1

| Հ/Հ | Օբյեկտի և ծրագրի անվանումը | 2013թ. Ծրագիր (մլն դրամ) | Կատարվել է առ | | Ծանոթութ-յուն |
|---|---|---|---|---|---|
| | | | **01.07.13թ.** (մլն դրամ) | այդ թվում հրատապ 4-րդ ծրագրով | |
| | **Ընդամենը մարզում՝** | **235.630** | **250.492** | **87.492** | |
| **I** | **ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ** | **235.630** | **212.492** | **87.492** | |
| **1** | Ալավերդու բժշկական կենտրոնի հիմնանորոգում | **156.000** | 125.000 | | |
| | **ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)** | **79.630** | **87.492** | **87.492** | |
| 1 | Վանաձոր համայնքի ինֆեկցիոն հիվանդանոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցում | 13.000 | 5.6275 | 5.6275 | |
| 2 | Գուգարք համայնքի ամբուլատորիայի կառուցում | 24.000 | 25.260 | 25.2600 | |
| 3 | Վանաձոր համայնքի թիվ 5 համաբուժարանի վերանորոգում | 1.130 | 1.510 | 1.5100 | |
| 4 | Սպիտակ համայնքի «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի վերանորոգում | 31.500 | 32.450 | 32.4500 | |
| 5 | Ալավերդի համայնքի տուբերկուլյոզային դիսպանսերի տանիքի վերանորոգում | 7.000 | 6.605 | 6.6048 | |
| 6 | Ծաղկաբեր համայնքի ԲՄԿ-ի վերանորոգում | 3.000 | 3.000 | 3.0000 | |
| 7 | «Մեծավանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի ջեռուցման համակարգի կառուցում | *2.520* | 2.520 | 2.5200 | |
| 8 | Վանաձոր համայնքի թիվ 4 պոլիկլինիկայի վերանորոգում | | 8.620 | 8.6200 | |
| 9 | Վանաձոր համայնքի թիվ 2 պոլիկլինիկայի վերանորոգում | | 1.900 | 1.9000 | |
| | **ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ** | **104.600** | **38.000** | **0.000** | |
| 1 | Ալավերդու հիվանդանոցի դիահերձարանի կառուցում | *76.600* | 10.0 | | ՀՍՆՀ |
| 2 | Շահումյան համայնքի ամբուլատորիայի վերակառուցում | *28.000* | 28.0 | | ՀՍՆՀ |

Առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես ՄԶԾ-ի ոլորտային գերակա նպատակ:

Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, մարզում բնակչության առողջական վիճակի բարելավման համար զարգացման գերակա նպատակ են. համարվում բուժծառայությունների որակի և մատչելիության բարձրացումը: Այս նպատակին է միտված առողջության առաջնային պահպանման մակարդակի, առաջնային և երկրորդային

բուժօգնության բուժհաստատությունների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները:

2013թ. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերից իրականացված են՝

- 2013թ.կատարվել են «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիմնանորոգման 3-րդ փուլի աշխատանքների մեծ մասը.
  - ✓ Լոռու մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրի 4-րդ փուլով վերանորոգվել է նաև հակատուբերկուլյոզային բաժանմունքի տանիքը:
  - ✓ Ավարտվել է «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դիահերձարանի կառուցման համար հողահատկացումը, սկսվել են կառուցման աշխատանքները: Այս նպատակով ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի կողմից տրամադրվել է 74.0 մլն դրամ, իսկ «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կատարվել է 8.0 մլն ներդրում:
- Հիմնանորոգվել է Ծաղկաբերի ԲՄԿ-ն, որի համար Լոռու մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրի 3-րդ փուլով կատարվել է 3 մլն. ներդրում:
- Ավարտվել են «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տանիքի վերանորոգման աշխատանքները:
- Ավարտվել են «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային մասի վերանորոգման և թթվածնի մատակարարման կենտրոնացված համակարգի մոնտաժման աշխատանքները, որի համար Լոռու մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրի 4-րդ փուլով կատարվել է 50 մլն. ներդրում:
- «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի հակատուբերկուլյոզային բաժանմունքում Լոռու մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրի 4-րդ փուլով անց է կացվել ջեռուցման համակարգ, հիվանդանոցային մասնաշենքում ևս ավարտվել են ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքները:
- Լոռու մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրով ավարտված են «Գուգարքի ԱԱՊԿ»ՓԲԸ-ի շենքի կառուցման աշխատանքները:
- Կառուցվել է «Մեծավանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի ջեռուցման համակարգը:

Օպտիմալացման արդյունքում Վանաձոր քաղաքում ստեղծված նոր բժշկական կենտրոնի կառուցման նպատակով կատարվել է հողահատկացում: Նոր բժշկական կենտրոնի գործունեության համար նախատեսվում է կառուցել նոր շենք՝ հագեցած ժամանակակից սարքավորումներով և համապատասխան կադրերով: Այդ նպատակով Համաշխարհային բանկի կողմից կներդրվի մոտ 12 մլն ԱՄՆ դոլար:

Մարզում առողջապահական ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ ընթանում են սերտ համագործակցային աշխատանքներ՝ «Հիպոկրատ» հունական հիմնադրամի, «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության, Ֆրանսիահայ բժիշկների միության, «Երուսաղեմի սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի, ԱՄՆ ՄԶԳ-ի Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների (ԱԱՊԲ) ծրագրերի հետ:

2013թ. Լոռու մարզ գործուղված, ինչպես նաև ոչ տեղաբնակ նոր նշանակված բժիշկ-մասնագետների բնակարանային կարիքները լուծելու հարցում ցուցաբերվում է նյութական և կենցաղային հետևողական աջակցություն («Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում աշխատանքի է ընդունվել 1 սիրիահայ բժիշկ, ՀՀ ԱՆ կողմից գործուղվել են ևս 5 բժիշկներ):

Երևանի բժշկական կազմակերպությունների բժիշկ մասնագետներից կազմված խմբեր են գործուղվել մարզի բժշկական կազմակերպություններ՝ տվյալ ընկերությունում մասնագիտացված բուժօգնությունը բնակչությանը հասանելի դարձնելու նպատակով:

ՀՀ Լոռու մարզպետի կարգադրությամբ երեխայի առողջության և ծննդօգնության պետական հավաստագրերի ներդրման գործընթացի հսկողության և մոնիտորինգի իրականացման նպատակով ստեղծվել է մոնիտորինգային խումբ, որը պարբերաբար կատարել է մոնիտորնգ մարզի բոլոր առողջապահական ընկերություններում՝ իր կազմի մեջ ընդգրկելով հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Մի շարք առողջապահական ընկերություններ բացել են ինտերնետային կայք-էջեր, որտեղ արտացոլված են ընկերությունների ողջ գործունեությունն ու աշխատանքի ծավալը:

Տուբերկուլոզի ազգային ծրագրի շրջանակներում տարբեր թեմաներով վերապատրաստվել են բժիշկներ և բուժքույրեր:

ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ վարչությունը իրականացրել է նաև հատուկ (առանձին) և սոցիալական անապահով խմբերի քաղաքացիներին հանրապետության առողջարաններ ուղեգրման գործընթացը: 2013թ. 1-ին կիսամյակում «Ջերմուկ», «Արզնի», «Գանձաղբյուր» առողջարաններ են ուղեգրվել թվով քաղաքացիներ, համապատաս-խանաբար՝ 9, 15, և 12, «Արարատ» մոր և մանկան առողջարան՝ մինչև 18 տարեկան 3 երեխա:

## 2.4. Սոցիալական պաշտպանություն

*Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2013թ. Սոցիալական պաշտպանության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **677.461 մլն** դրամ 2013թ. Փաստացի պլանավորվել է 5.00 մլն դրամի ներդրում, ամբողջությամբ ՀՀ պետբյուջեից, որն ամբողջությամբ իրականացվել է 1-ին կիսամյակում (4.9 մլն դրամով Ղուրսալի համայնքում փախստական ընտանիքի համար բնակարանի ձեռքբերում):*

2013թ. ՄԶԾ-ում որպես ոլորտային նպատակ նախանշվել է բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը Լոռու մարզում, որին նպատակաուղղվել են յոթ ծրագրային ուղղություններով առաջարկված թվով 10 ծրագրերը, որոնց իրականացմամբ կբարելավվի հանրային իրազեկման մակարդակը, սոցիալական ծրագրերի իրականացումը և սոցիալական ծառայությունների կառավարումը, կընդլայնվեն բնակչության խոցելի խմբերին տրամադրվող սոցիալական ծառայությունները, մասնավորապես՝ տարեցների և հաշմանդամների շրջանում: Համագործակցության արդյունքում ենթադրվում է, որ կբարելավվի սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական բազան, շարունակաբար կընթանա սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի վերապատրաստման գործընթացը, որի ընթացքում կզարգացվեն ոլորտում զբաղվածների կարողությունները:

Ծրագրերի իրականացման ուղղությամբ 2013թ. առաջին կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- **Սոցիալական ապահովության բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում** ծրագրի շրջանակներում եռօրյա դասընթացին /հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներ/ մասնակցություն են ունեցել մարզպետարանից 1, ՀԿ սեկտորից /«Լիարժեք կյանք» ՀԿ/՝ 1 անձ:
- **Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավում** (ինչի արդյունքում կավելանան խոցելի բնակչության սոցիալական սպասարկման համատեղ իրականացվող ծրագրերը). միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների և ՏԻՄ-երի համատեղ իրականացվել են սոցիալական ավելի քան 20 ծրագիր:

- Մարզի որոշ համայնքներ դրամական օգնություն են տրամադրել մի շարք ՀԿ-ների կամ կոնկրետ շահառուներին (Վետերանների խորհուրդ, Խուլերի կազմակերպություն և այլն):
- Լոռու մարզպետարանի կողմից դրամական աջակցություն է ցուցաբերվել առանձին քաղաքացիների կամ կազմակերպությունների: Անհայտ կորած զինծառայողների 14 ընտանիքների Լոռու մարզպետը տրամադրել է 20.000-ական դրամ աջակցություն:
- **Կամավորների շարժման (կենտրոնի) զարգացում, երիտասարդության շրջանում կամավորական շարժման խթանում**. ՀԿ-ների տարբեր ծրագրերում ընդգրկված կամավորների թիվը՝ 61 («Առավոտ» ՀԿ՝ 25, «Հայկական Կարիտաս»՝ 14 (Վանաձոր՝ 10, Տաշիր՝ 4), «Լիարժեք կյանք»՝ 22), որոնցից վերապատրաստվել են 14-ը:
- «**Սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների շենքային պայմանների բարելավում՝ Սոցիալական համալիրների (սոցիալական ծառայություն, զբաղվածության և կենսաթոշակային տարածքային կենտրոններ, ԲՍՓՀ) կառուցում» ծրագիր:** Ծրագրի իրականացումը ներկայումս ընթանում է պետական մակարդակով՝ առաջնահերթ աշխատանքներ են տարվում սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների մեկտեղման (նույն տարածքում) կամ ինտեգրման ուղղությամբ:
  *<u>Դեռևս հարմար տարածքներ չեն գտնվել Ստեփանավան, Սպիտակ քաղաքներում:</u>*
  Ալավերդիում առաջարկվում է «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող Ալավերդու ծննդատուն եռահարկ մասնաշենքի տարածքը (2099.4 քառ.մ.), որը 2013թ. ընթացքում ամբողջովին կազատվի:
  Տաշիրի տարածաշրջանային կենտրոնում՝ Տաշիր քաղաքում առաջարկվում է Տաշիր համայնքին պատկանող նախկին շրջխորհրդի գործկոմի շենքը վերակառուցել որպես համալիր կենտրոն (տարածքը լիովին բավարար է բոլոր ծառայությունների տեղակայման համար), որի առաջին հարկում կտեղակայվի նաև միասնական ընդունարանը: Առաջարկվող տարածքի համար առկա են նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
  Գուգարքի տարածաշրջանային կենտրոն հանդիսացող Վանաձոր քաղաքի Գ.Նժդեհի փող. թիվ 14 հասցեում 2005թ.-ից գործում է Սոցիալական համալիր կենտրոնը (որպես հանրապետությունում փորձնական առաջին ծրագրի արդյունք):
- **Լոռու մարզում տարեցների և հաշմանդամների վիճակի բարելավում ծրագրի շրջանակներում.** «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի Վանաձորում իրականացվող «Տնային խնամք միայնակ տարեցներին» ծրագրին աջակցությունը ընթացել է ընտանեկան նպաստ համակարգում չընդգրկված հրատապ օգնության տրամադրման (սոցիալական աջակցության խորհուրդների) միջոցով: Շահառուների ցուցակները յուրաքանչյուր եռամսյակ տրամադրվում է «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի Վանաձորի գրասենյակի կողմից:
  - ✓ ՀԿ-ներում խնամողների մասնագիտական վերապատրաստում անցած կամավորների թիվը 11 սոցաշխատող՝ խնամող և բուժքույրեր:
  - ✓ Սոցիալապես անապահով ընտանիքների անդամների սննդապահովում՝ մարդասիրական ճաշարանների կողմից սպասարկվող բնակչության թվաքանակը՝ 381:
  - ✓ Ծերերի խնամքի ծառայությունների իրականացում (բացի պետական տրանսֆերտներից խնամքի ծառայություններից օգտվող) ծերերի թիվը՝ 160 տարեցներ:
- **Հաշմանդամություն ունեցող անձանց** (հատկապես՝ հաշմանդամ երեխաների և նրանց ծնողների) ապահովում վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով՝ 2013թ. առաջին 5 ամիսներին վերականգնողական և տեխնիկական անհրաժեշտ այլ միջոցներ ստացած հաշմանդամություն ունեցողների թիվը՝ 48:

- **«Ստեփանավանի հատուկ կարիքներով անձանց կրթության և զարգացման համայնքային կենտրոն»-ի զարգացում**. Հաշմանդամություն ունեցող երեխաների առողջավերականգնողական ցերեկային կենտրոնի ծառայություններից օգտվել են 60 երեխաներ, որից՝ 15 հաշմանդամություն ունեցող:
- **Աջակցություն զբաղվածության քաղաքականությանը.** Զբաղվածության բնագավառում ՀՀ կառավարությունը շարունակել է իր քաղաքականությունը և պետական ծրագրերի մասով հատկացումները:
  - ✓ Վերապատրաստված գործազուրկների թիվը՝ 32 մարդ կամ 16%: Աշխատանքի տեղավորում դեռևս չի իրականացվել, քանի որ ծրագիրը ընթացքի մեջ է:

***Աջակցություն բնակարանային ապահովման քաղաքականությանը.***

- ***ՄԶԾ առաջարկված փարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց*** **հիմնախնդիրների** լուծմանն ուղղված քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցման (մեր կողմից ճշտվել են կառուցման վայրերը և քաղաքային համայնքները պատրաստ են իրենց մասով ներդրումներ կատարել), բնակչությանը սոցիալական ծրագրերի վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ու սոցիալապես խոցելի խմբերի կարիքների գնահատմանն ուղղված միջոցառումների իրագործման համար: Առաջարկված ծրագրով ֆինանսավորում չի կատարվել: Այսօր առկա է հետևյալ պատկերը՝ քաղաքային համայնքների մշակութային և սպորտային 68 կենտրոններում (որից՝ սպորտային՝ 18 և մշակութային՝ 51) կառուցվել է ընդամենը 2 թեքահարթակ:

ՄԶԾ մյուս ծրագրերի կատարման համար (Սպիտակում տարեցների կենտրոնի հիմնում, Վանաձորում՝ հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական և պրոթեզաօրթոպեդիկ պարագաների վերանորոգման մարզային ծառայության ստեղծում) համայնքները պատրաստակամ են, նպատակային միջոցներ չեն հատկացվել: Իսկ Ալավերդի քաղաքում՝ տարեցների ցերեկային կենտրոնի ստեղծումը քաղաքապետարանը հրատապ անհրաժեշտություն չի համարել:

## 3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

### 3.1. Գյուղատնտեսություն

Մարզի գյուղատնտեսության ոլորտում 2013թ. ՏԱՊ-ով բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսվել է **267.44** մլն դրամ, որից **10.0** մլն դրամը պետական բյուջեից (Խնկոյանի ջրամբարի վերանորոգում), միջազգային կազմակերպությունների կողմից՝ **250.0** մլն դրամ՝ ոռոգման համակարգերի վերականգնման և «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագիր արոտների կառավարման և անասնապահության զարգացման համար: Ոլորտում համայնքային բյուջեներից նախատեսված է 7.44 մլն դրամի ներդրում:

2013թ. առաջին կիսամյակում իրականացվել է **9.851** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում պետ. բյուջեով՝ **9.166** մլն դրամը՝ ՀՀ պետբյուջեով (IV հրատապ ծրագիր): Համայնքային բյուջեներից ներ է դրվել 0.685 մլն դրամի աշխատանքներ:

**Գյուղատնտեսության ոլորտում 2013 թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները**

| Հ/Հ | Օբյեկտի և ծրագրի անվանումը | 2013թ. | Կատարվել է առ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|

| | | Ծրագիր (մլն դրամ) | 01.07.13թ | այդ թվում հրատապ 4-րդ ծրագրով | |
|---|---|---|---|---|---|
| | **Ընդամենը մարզում՝** | **267.44** | **9.851** | **9.166** | |
| **I** | **ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ** | **10.00** | **9.166** | **9.166** | |
| | **ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)** | **10.00** | | | |
| 1 | Խնկոյանի ոռոգման ջրամբարի վերանորոգում | 10.00 | 9.166 | 9.166 | |
| **II** | **ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ** | **7.4393** | **0.685** | | |
| 1 | Ղուրսալի համայնքում գյուղտեխնիկայի ձեռքբերում | 4.9393 | | | |
| 2 | Օձուն համայնքում գյուղտեխնիկայի ձեռքբերում | 2.50 | 0.685 | | |
| **III** | **ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ** | **250.00** | | | |
| | **«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագիր** Արոտների կառավարում և անասնապահության զարգացում | 250.00 | | | |

Մարզի տնտեսության մեջ գյուղատնտեսության ոլորտը ավանդաբար նշանակալից տեղ է զբաղեցրել: Սակայն ներկա շրջանում գյուղատնտեսական արտադրողականության բարձրացումը ՄԶԾ-ի այս ոլորտի ամենակարևոր նպատակներից է: Այս նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ գյուղատնտեսական հեռանկարների վերաբերյալ հստակ պատկերացումներ, հստակ սահմանված ոլորտային գերակայություններ, լավ հիմնավորված ռազմավարություն, ինչպես նաև համատեղ գործողություններ տարածքային կառավարման մարմինների, գյուղատնտեսական ասոցիացիաների, համայնքների և ֆերմերների կողմից, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայություն:
Լոռու մարզի զարգացման ծրագրում առաջնային թիրախներ են.

- ✓ սերմնաբուծական տնտեսությունների հիմնումը հացահատիկային, միամյա ու բազմամյա խոտաբույսերի սերմարտադրության համար
- ✓ կարտոֆիլի վիրուսազերծ պալարիկների արտադրությունը երկրագործության ինստիտուտի Ստեփանավանի տարածքային կայանի հիման վրա
- ✓ բանջարեղենի պահպանման սառնարանային տնտեսությունների հիմնում
- ✓ կարտոֆիլի, բանջարեղենի և պտղի վերամշակման արտադրամասերի հիմնում
- ✓ կաթի սառեցման և վերամշակման արտադրամասերի հիմնում:

Կարևորվում է նաև գյուղատնտեսական ենթակառուցվածքների բարելավման աշխատանքները: Այն ներառում է սառնարանային և վերամշակող տնտեսությունների, փոքր սպանդանոցների, կաթի ընդունման և վերամշակման կետերի հիմնում, համայնքի ոռոգման համակարգերի վերականգնում և այլն: Սրանց մի մասը նախատեսվում է ֆինանսավորվել պետական բյուջեի կողմից, իսկ մյուս մասը պետք է լինի մասնավոր նախաձեռնությունների արդյունք:

2013 թվականի 1-ին կիսամյակում.

- Շվեյցարական «Կազա» հիմնադրամի աջակցությամբ Գոգարան համայնքում գործող «Զարթոնք» կոոպերատիվին տրամադրվել է 1.070 մլն դրամ՝ սերմացուներ ու պարարտանյութ ձեռք բերելու համար:
- 2012թ. աշնանացանի համար ՀՀ կառավարության կողմից մարզին հատկացվել է ՌԴ-ից ներկրված 56.5 տ աշնանացան ցորենի էլիտային սերմացու, որը տրամադրվել է 15

ֆերմերային տնտեսությունների, որով կատարվել է 188.3 հա աշնանացան ցորենի ցանք:

- 2013թ. գարնանը ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մարզին հատկացվել է 2545 տոննա ազոտական պարարտանյութ, 933.328 լ դիզելային վառելանյութ, 50 տոննա գարնանացան գարու, 4 տոննա եգիպտացորենի, 6.5 տոննա կորնգանի և 5 տոննա առվույտի սերմացուներ:
- Լոռու մարզային փրկարարական վարչության մասնագետների հետ համատեղ ուսումնասիրվել է տարերային աղետներից առավել տուժած համայնքների ցանքերի վիճակը, կազմվել է մասնագիտական ակտ պատճառված վնասների չափի վերաբերյալ և ներկայացվել մարզպետի հաստատմանը: <Տաշիր> հիմնադրամի կողմից կարկտահարությունից առավել տուժած Ամրակից, Լեջան և Ագարակ համայնքներին տրամադրվել է 42.5 տոննա ազոտական պարարտանյութ:
- ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մարզին հատկացված 868.44կգ ցինկի ֆոսֆիդը ներ է կրվել մարզ և բաշխվել մարզի համայնքներին:
- Գյուղատնտեսական կենդանիների վրա գայլերի ոհմակների հարձակումների հետ կապված մարզի Դեբեդ, Ամրակից, Ջրաշեն համայնքների ղեկավարներից ստացված ահազանգի հիման վրա տեղում կատարվել են ուսումնասիրություններ:
- Վերանորոգվել է Խնկոյան համայնքի ոռոգման ջրամբարը; Աշխատանքների իրականացման համար պետական բյուջեից կատարվել է 9,167.0 հազար դրամ ներդրում:
- 01.07.2013թ. դրությամբ ոռոգման աշխատանքներ իրականացվել է միայն «Լոռու ջրանցք» ՋՕԸ-ի կողմից: Ոռոգման, ջրարբիացման և համակարգերի շահագործման նպատակներով կատարվել է 198.5 հազար խմ ջրառ, որի ջրտուքը կազմել: 138.6 հազար խմ: Տրված ջրի հասույթը կազմել է 7,952.1 հազար դրամ, որից հավաքագրվել է 5,903.7 հազար դրամ կամ գանձումը կատարվել է 74.2 %-ով:

### 3.2. Բնապահպանություն

Մարզի բնապահպանության ոլորտում 2013թ. ՏԱՊ-ով բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսվել է **245.73** մլն դրամ, որից **12.00** մլն դրամը պետական բյուջեից՝ հրատապ ծրագրով, **233.73** մլն դրամ՝ համայնքային բյուջեներից:

2013թ. առաջին կիսամյակում իրականացվել է **28.08** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում **10.82** մլն դրամը պետական բյուջեից՝ IV հրատապ ծրագրով: Համայնքային բյուջեներից ներ է դրվել **17.26** մլն դրամ:

**Բնապահպանության ոլորտում 2013 թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները**

| Հ/Հ | Օբյեկտի և ծրագրի անվանումը | 2013թ. Ծրագիր (մլն դրամ) | Կատարվել է առ | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| | | | 01.07.13թ (մլն դրամ) | այդ թվում հրատապ 4-րդ ծրագրով | |
| | **Ընդամենը մարզում՝** | **245.732** | **28.080** | **10.820** | |
| **I** | **ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ** | **12.000** | **10.820** | **10.820** | |
| | **ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)** | **12.00** | **10.82** | **10.82** | |
| | Վահագնիի հեղեղատարի կառուցում | 12.00 | 10.82 | 10.82 | |
| **II** | **ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ** | **233.732** | **17.260** | | |
| 1 | Վանաձոր քաղաքում աղբարկղների ձեռքբերում և տեղադրում, կեղտաջրերի հեռացում | 5.7600 | 1.170 | | |
| 2 | ք. Ալավերդում բնապահպանական ծրագրերի իրականացում | 75.3200 | 2.314 | | |
| 3 | ք. Ախթալայում բնապահպանական ծրագրերի իրականացում | 3.5000 | | | |
| 4 | Գուգարք գյուղում աղբարկղների տեղադրում և սելավատարների մաքրում | 1.3300 | 1.263 | | |
| 5 | Դարպաս համայնքի սելավատարի նորոգում | 5.6319 | | | |
| 6 | Աքորի համայնքում բնապահպանական ծրագրերի իրականացում | 27.0500 | | | |
| 7 | Հագվի համայնքում բնապահպանական ծրագրերի իրականացում | 44.0400 | 8.533 | | |
| 8 | Հաղպատ համայնքում բնապահպանական ծրագրերի իրականացում | 17.5000 | 0.98 | | |
| 9 | Օձուն համայնքում բնապահպանական ծրագրերի իրականացում | 53.6004 | 3.00 | | |

